ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ
MUNICIPALITY OF TALIN

0501 ք.Թալին Գայի 1
Հեռ 060-75-77-87
Էլ.փոստ : talinihamaynqapetaran@list.ru

0501 t.Talin
Tel.060-75-77-87
Email:talinihamaynqapetaran@list.ru

№ 056/141Հ

01 06 2026թ

<<ԲՈՌՍԱ>> ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ
/հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ ք.Հրազդան Երևանյան խճուղի 141
Հեռ +(374) 33017400
Baghdasaryan.qristina77@mail.ru
ՀՎՀՀ 03031875

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Թալինի համայնքապետարանի և «Բոռսա» ՍՊ ընկերության միջև 2026թվականի ապրիլի 17-ին կնքված «ՀՀ ԱՄ ԹՀ-ԳՀԱՇՁԲ-26/39» ծածկագրով, Թալին համայնքի Թալին համայնքի մի շարք բնակավայրերում արհեստական անհարթությունների փոսալցման և ճաքալցման աշխատանքների ձեռքբերման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր), 1.1 կետի համաձայն՝ կատարողը պարտավորվում սույն պայմանագրով սահմանված կարգով կատարել փոսալցման և անհարթությունների վերացման աշխատանքները հավելված 1-ով նախատեսված ծավալաթերթի համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարած աշխատանքը և վարձատրել դրա համար:

Թալինի համայնքապետարանի գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից, ինչպես նաև վերը նշված շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացնող Վերտիկալ ՍՊԸ-ի տեղեկությունները հիմք ընդունելով պարզվել է, որ պայմանագրի կատարման վերջնաժամկետի՝ 27.05.2026թ-ի դրությամբ կապալառու կազմակերպությունը աշխատանքները չի սկսել և աշխատանքների կատարման ժամկետի երկարացման դիմում-գրություն չի ներկայացրել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի

(պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բոռսա» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է պայմանագիրը միաժամանակ կիրառելով տուգանք համաձայն Պայմանագրի 6.3կետի (Պայմանագրի 5.1կետով սահմանված գումարի 0.5%-ի չափով) 68504/վաթսունութ հազար հինգ հարյուր չորս/ ՀՀ դրամ և *պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները և պայմանագրի 8.11 կետը, այն է՝*

Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

Պայմանագիրը կհամարվի ամբողջությամբ լուծված Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդ օրվանից

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Այսպիսով **««ԲՈՌՍԱ» ՍՊԸ**-ին տրվում է 10/տաս օրացուցային օր տուժանքով սահմանված որակավորման ապահովման **2932000**/երկու միլիոն ինը հարյուր երեսուներկու հազար /ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման **1955000**/մեկ միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար /ՀՀ դրամ գումարները Թալինի համայնքապետարանի 900462151096 հաշվին փոխանցելու նպատակով

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն ««**ԲՈՌՍԱ» ՍՊԸ**-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացրած որոկավորման և պայմանագրի ապահովումները միկողմանի հաստատված հայտարարության տուժանքի ձևով կներկայացվեն մատակարարի բանկ նշված գումարները գանձելու նպատակով:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Թալին համայնքի ղեկավարի Պ.Պ. Ս.Մկրտչյան